Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2021 թվականին Վայոց ձոր մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կատարված աշխատանքների վերաբերյալ

Աղյուսակում ներկայացնում ենք 2021 թվականին մարզում կատարված ցանքերը և ստացված բերքը.

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021թ կատարված ցանքերը և ստացված բերքը	
		Ցանք /հա/	Բերք /տ/
1	Հացահատիկև հատիկաընեղեն	1569	1554
2	Բանջարեղեն	272	3442.5
3	Բոստան	50	348
4	Կարտոֆիլ	107	1204
5	Պտուղ, հատապտուղ	2138	7139
6	Խաղող	1200	4033.2
7	Կերային	1847	22971

Արտադրված 4033.2 տոննա խաղողից մթերվել է 3579.5 տոննա, որից 1896 տոննան՝ մարզի վերամշակողների կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում վարչության կողմից համակարգվել են անասնաբուժական ծառայությունների աշխատանքները: Մարզի անասնաբուժական ծառայությունների կողմից պետպատվերով նախատեսված բոլոր անասնաբուժական կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները իրականացվել են համաձայն պլան գրաֆիկի

Բրուցելյոզ խ.ե.կ - 17611 գլուխ,
բրուցելյոզ մ.ե.կ - 9471 գլուխ,
դաբաղ խ.ե.կ - 26479 գլուխ
տուբերկուլյոզ խ.ե.կ.- 685 գլուխ
սիբիրախտ խ.ե.կ - 34932 գլուխ
Էմկար - 39296 գլուխ
Մաշկաբորբ - 9647 գլուխ
սիբիրախտ ձիերի - 551 գլուխ.
լեյկոզ խ.ե.կ - 165 գլուխ.
դաբաղ մ.ե.կ. - 2341 գլուխ

1. **Ոռոգման սեզոնին <<Եղեգնաձոր>> ՋՕ-ի կողմից ջրտուքը կազմել** է 11 453 000մ^3, հասույթը կազմել է 125 000 000 դրամ,գանձվել է 122 350 000 դրամ, կամ 97.1%:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից անվճար տրամադրված 54.4լ բրամադիալոն թունանյութի միջոցով մարզի 9 բնակավայրերում 680 հեկտար վարակված վարելահողերի և բազմամյա տնկարկների վրա իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ,

Վարչության կողմից արձանագրվել է, որ վայրի գիշատիչ կենդանիների, մասնավորապես արջի կողմից Զառիթափ, Եղեգիս, Արենի, Գլաձոր համայնքների 112 գյուղացիական տնտեսությունների հասցվել 10 597 500 դրամի վնաս

Երաշտի հետևանքով չի հնձվել 727 հա հացահատիկային մշակաբույսերի (գարի, ցորեն, հարճար) ցանքատարածություններ, վնասի չափը կազմել է 152 768 590 դրամ:

Կարկտահարության հետևանքով. 2021թվականին վնասվել է 250հա տարածք, որից 225 հա պտղատու այգի , 8.7հա բանջար – բոստանային մշակաբույսեր և 16 հա գարնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններ: Վնասի չափը կազմել է 342 035 000 դրամ:

Կարկատահարության վնասները մեղմելու **համար կառավարությունը մարզին հատկացրել է 60.8մլն դրամ՝ 32 նոր հակակարկտային կայաններ տեղադրելու համար:**

Բոլոր 32 կայաններ արդեն տեղադրված են: Ստորև ներկայացված են այն համայնքները, որտեղ տեղադրված են հակակարկտային կայանները:

Ջերմուկ	համայնք	-	4 կայանք, 320հա ծածկողականություն
Զառիթափ	համայնք	-	5 կայանք, 400հա ծածկողականություն
Վայք	համայնք	-	5 կայանք, 400հա ծածկողականություն
Մալիշկա	համայնք	-	2 կայանք, 160հա ծածկողականություն
Եղեգնաձոր	համայնք	-	3 կայանք, 240հա ծածկողականություն
Գլաձոր	համայնք	-	3 կայանք, 240հա ծածկողականություն
Եղեգիս	համայնք	-	7 կայանք, 560հա ծածկողականություն
Արենի	համայնք	-	3 կայանք, 240հա ծածկողականություն

Կառավարությունը 24.2մլն. դրամ է հատկացրել Գետափ-Եղեգնաձոր-Գլաձոր-Վերնաշեն ոռոգման ջրագծի վթարային 29 հենասյունեի վերանորոգման համար: Շինարարկան աշխատանքներն ընթացքի մեջ են և կավարտվեն 2022 թվականին:

Կազմակերպվել է <<Արաքս>> թռչնաֆաբրիկայի կողմից արցախյան պատերազմում զոհված, վիրավորված և անհետ կորած զինծառայողների և սոցիալապես անպահով ընտանիքներին բարեգործական հիմունքներով տրամադրված մեկ օրական ճտերի հասցեական բաշխումը (առաջին փուլ՝ 14 2009 ճուտ, երկրորդ փուլը 6000ճուտ):

Բանկերի կողմից գյուղացիական տնտեսություններին տրամադրված վարկերի ընդհանուր գումարը և շահառուների թիվը.

Ֆարմ Կրեդիտ, Կամուրջ ՈՒՎԿ , Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկերի կողմից մարզի գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է.

Ընդամենը 940 000 000 դրամ, 545 շահառուի:

Բնապահպանություն

1. Արենի համայնքի Խաչիկ և Գնիկշիկ բնակավայրերում քվարցիտային հանքավայրերի շահագործման վերաբերյալ անցկացվել են հանրային լսումներ:
2. Խաչիկ բնակավայրում <<Յուլի Դալի >> ՍՊԸ-ին տրվել է թույլատվություն կատարելու նախնական ուսումնասիրություն:
3. Գնիշիկ բնակավայրի քվարցիտների հանքավայր <<Ջրաձոր>> տեղամասի հանքարդյունահաման աշխատանքների վերաբերյալ անցկացվել է հանրային լսում:
4. <<Վայք Գոլդ>> ՍՊԸ-ն Ազատեկի ոսկի բազմամետաղային հանքավայրի ստորգետնյա եղանակով արդյունահանման աշխատանքների վերաբերյալ ՇՄԱԳ-ի քննարկում:
5. Ուսումնասիրվել է Եղեգիս համայնքի Հորս բնակավայրում կառուցվող ՓՀԷԿ-ի գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ըստ նախնական եզրակացության ՓՀԵԿ-ի գործարկումը խիստ բացասաբար կազդի շրջակա միջավայրի վրա:
6. Շրջակա միջավայրի նախարարությունում քննարկվել է մարզի Եղեգիս գետի վրա կառուցված 11 ՀԷԿ –երի գործունեության ուսումնասիրությունը՝ որպես <<ՇՄԱԳ>>:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության

պետ՝ Գ. Մարգարյան